ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՂԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Աշխարհի պատմության գրքում արձանագրվեց ևս մի ավերիչ թվական՝ 7 Դեկտեմբեր 1988, երբ մեր մոլորակի մակերեսը ահավոր սաստկությամբ ցնցվեց ու ալեկոծվեց տասնյակ կիլոմետր տարածության վրա և չորս քաղաքներ ու 58 գյուղեր կործանվեցին, փլատակների տակ թողնելով ավելի քան քսան հազար մարդիկ, մեծ մասամբ երեխաներ, պատանիներ, նաև գրեթե նույնքան վիրավորներ, որոնցից շատերը հաշմանդամ են մնացել: Անտուն մնացին կես միլիոն բնակիչներ:

Այս բնական աղետը պատահեց մի փոքր երկրում, Խորհրդային Հայաստանում:

Այո, այդ օրը ցնցվեց մեր մոլորակի մակերեսը ահարկու սաստկությամբ, բայց ցնցվեց նաև մեր մոլորակի մարդկության խիղճը նույն ուժգնությամբ:

Բնության աղետին ու ողբերգության պատասխանեց մարդկային բարոյական զգացումը, գութի զգացումը, ուժգին կերպով՝ ստանալով համամարդկային համեմատություններ:

Այս երկու ցնցող երևույթների առաջ չգիտես ավելի զարհուրես աղետի հետևանքներից, թե հիանաս ու մխիթարվես ի տես այն գութի, ցավակցումի ու օգնության ձեռք երկարելու համընդհանուր ինքնաբուխ արտահայտությունների, որոնք ուղղվեցին աղետյալ ու վիրավոր հայ ժողովրդին:

Հայաստանի ողբերգությունը մոգական մի գավազանի նման ի մի համախմբեց ողջ մարդկությունը, որի սիրտը բաբախեց նույն մարդասիրական ռիթմով: Դոնե մի պահ, մեր օրերի տագնապալի աշխարհի մարդիկ ու ազգություններ համերաշխվեցին ու գիտակցեցին, թե բոլորը մի ճակատագրով մի տան բնակիչներ են, իբրև եղբայրներ, մի Հայր Աստուծո զավակներ:

Իբրև հոգևոր առաջնորդը հայ ազգի, դառնորեն ողբում եմ անցյալ Դեկտեմբերի երկրաշարժի բազմահազար զոհերին և աղոթում նրանց անմեղ հոգիների համար:

Ու նաև իմ խոր երախտագիտությունն եմ հայտնում բոլոր բարի խղճի տեր մարդկանց և ժողովուրդներին՝ Խորհրդային Միությունից և աշխարհի բոլոր հորիզոններից, որոնք աննախընթաց բարոյական միասնությամբ օգնության հասան և շարունակում են հասնել աղետահար Հայաստանին:

Հավատում եմ, որ մի քանի տարի անց, պիտի վերականգնվեն կործան-

ված քաղաքներն ու գյուղերը, պիտի մոռացվեն այս օրերի տառապանքներն ու զրկանքները, սակայն երբեք չի մոռացվելու միջազգային հիանալի դրսևորումը համամարդկային խղճի, որպես մարդասիրական բարոյական հուշարձան:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 Մայիս 1989 թ.